

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՏԱՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Արձանագրություն N1

քաղաք Երևան

ուրբ ապրիլի երկու հազար տասնչորս թվականի

ՀՀ արդարադատության նախարարության նոտարների որակավորման ստուգման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի ապրիլի 8-ի նիստում ուսումնասիրեց և ամփոփեց նոտարների որակավորման ստուգման թեկնածուների դիմումները:

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

- Ա. Օրբեյյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
- Ն. Բալայան - ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի համակարգի իրավական ապահովման վարչության պետ
- Հ. Սարգսյան - ՀՀ արդարադատության նախարարի օգնական
- Դ. Մխեյան - ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության նոտարիատի և քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների գործունեության օրինականության վերահսկողության բաժնի պետ
- Ռ. Մուկուչյան - Գյումրի նոտարական տարածքի նոտար
- Ռ. Սահակյան - Կենտրոն նոտարական տարածքի նոտար
- Օ. Հակոբյան - Նոր Նորք նոտարական տարածքի նոտար
- Տ. Գրիգորյան - Գավառ նոտարական տարածքի նոտար

Ներկա էր հանձնաժողովի քարտուղար Լ. Իսկանդարյանը:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Նոտարների որակավորման քննությունների դիմողների գործերի ուսումնասիրություն՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանելու տեսակետից:
2. Նոտարական քննությունների թեստավորման փուլի իրականացման հետ կապված ընդհանուր հարցեր:
3. Կազմակերպչական այլ հարցեր:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ՝

Օրակարգի առաջին հարցի հետ կապված հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց, որ որակավորման ստուգման համար դիմել է 49 թեկնածու: Բոլոր դիմումները նախնական ուսումնասիրվել են և պատրաստվել է համապատասխան տեղեկանք: Բոլոր դիմումները և կից փաստաթղթերը ուսումնասիրվեցին հանձնաժողովի անդամների կողմից՝ ըստ այբբենական կարգի:

Դիմումները քննվել են հաշվի առնելով ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 6-ի «Նոտարների թեկնածուների որակավորման ստուգման կարգը հաստատելու մասին» N 789-Ն

որոշմամբ (վերախմբագրվել է ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի N 1463-Ն որոշմամբ) հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջները:

Դիմումների ուսումնասիրության արդյունքում արձանագրվեց որ թվով 44 դիմում ամբողջությամբ համապատասխանում են Կարգում առաջադրված պայմաններին: Մնացած դիմումատուների դիմումները որոշվեց մերժել հետևյալ հիմնավորմամբ՝

- 1 դիմումի հիմքում դրվել էր հինգ տարի մասնագիտական աշխատանքային ստաժի առկայությունը, սակայն ներկայացված փաստաթղթերը և հիմնավորումները բավարար չէին համապատասխան աշխատանքային գործունեությունը հաստատելու համար (Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորի օգնականի աշխատանքը՝ ըստ գործող օրենսդրության և Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի աշխատակազմի կողմից տրամադրված տեղեկատվության հաշվարկվում է պետական կառավարման ստաժում, սակայն չի ներառվում մասնագիտական ստաժի հաշվարկում):

- 1 դիմողի «մասնագիտական աշխատանքային գործունեությունը» իրականացվել էր մինչև իրավաբանության բակալավրի կամ որակավորված մասնագետի որակավորում ստանալը և հետևաբար չէր կարող համարվել մասնագիտական աշխատանքային փորձ (մասնագիտական է համարվում այն աշխատանքային փորձը, որի իրականացման համար անհրաժեշտ է համապատասխան որակավորման առկայություն):

- 2 դիմումատու անցել էին նոտարական ստաժավորումը մինչև բակալավրի որակավորում ստանալը, այնինչ «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն նոտարի ստաժոր կարող է նշանակվել այն անձը, որն ունի բարձրագույն իրավաբանական կրթություն:

- 1 դիմումատու ներկայացրել էր մանկավարժի (իրավաբանության ոլորտում) դիպլոմ, ինչը չի համարվում իրավաբանի բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորումը հավաստող փաստաթուղթ:

Առաջարկվեց նշված դիմումները /թվով հինգ/ մերժել, համապատասխան անձանց հնարավորություն տալով մինչև սույն թվականի ապրիլի տասնյոթի օրվա ավարտը ներկայացնել հավելյալ ապացույցներ կամ հանձնաժողովի որոշումը բողոքարկել վերադասության կարգով:

Օրակարգի երկրորդ հարցի հետ կապված հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց, որ տեխնիկական հնարավորությունից ելնելով, միաժամանակ քննություն կարող են հանձնել ոչ ավելի քան քսանհինգ մասնակից: Առաջարկվեց, հաշվի առնելով նախկինում առկա հաջող փորձը խմբերը բաժանել այբբենական կարգով (ազգանունների մասով), և ցուցակի առաջին քսանմեկ մասնակիցներին հրավիրել քննության առավոտյան տասին /10.00/, իսկ ցուցակի երկրորդ կեսին՝ ժամը տասներեքն անց երեսուն /13.30/: Առաջարկվեց, որ եթե մերժված դիմումատուները ներկայացնեն համապատասխան ապացույցներ, ապա նրանց թույլ տրվի ներկայանալ խմբերի հետ, ինչի մասին նրանք պետք է տեղեկացվեն լրացուցիչ:

Օրակարգի երրորդ հարցի հետ կապված Ա. Օրբելյանը առաջարկեց՝ հաշվի առնելով նախորդ քննությունների փորձը, ինչպես նաև բազմաթիվ դիմումատուների և փորձագետների առաջարկությունները, հրապարակել հարցաշարը՝ միայն հարցերը: Առաջարկվեց, որպեսզի քննության օրը առավոտյան համակարգչային ծրագրի միջոցով ընտրվեն քննության համար առանձնացված հարցաշարը և դրանք տպագրվեն բավարար քանակով, ընդ որում յուրաքանչյուր խմբի համար տպել նույնական տարբերակ: Հանձնաժողովի անդամները քննարկումների ժամանակ առաջարկեցին, որպեսզի թեստային առաջադրանքը ունենա չորս հնարավոր տարբերակ, որոնցից ճիշտ լինի միայն մեկը: Նաև առաջարկվեց, որպեսզի դիմորդը համարվի թեստը ճիշտ լուծած, երբ ընտրել է միակ ճիշտ կամ առավել ճիշտ պատասխանը, և չի ընտրել որևէ սխալ պատասխան, և այդ դեպքում նա թեստի այդ հարցի համար կստանա մեկ միավոր, հակառակ դեպքում՝ զրո միավոր:

Միննույն ժամանակ առաջարկվեց, որպեսզի, հաշվի առնելով նախորդ քննությունների դրական փորձը, ստուգումները անցկացվեն թափանցիկ, տեղեկացվեն ՁԼՄ-ների ներկայացուցիչներ և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

Դ. Մխեյանը առաջարկեց, որպեսզի համապատասխան մասնակիցների ցուցակները հրապարակվեն նախարարության կայքէջում: Նաև, հաշվի առնելով վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի պահանջները, մերժված բոլոր մասնակիցներին ծանուցել մերժումների մասին, նրանց ժամանակ տալով ներկայացնել համապատասխան հավելյալ ապացույցները, կամ օգտվեն վարչական կամ դատական կարգով բողոքարկման իրենց իրավունքից: Հաշվի առնելով օրենսդրության պահանջները առաջարկվեց որպեսզի մերժման մասին որոշումները անհատապես ուղարկվեն էլեկտրոնային փոստի հասցեներին, ինչպես նաև բոլոր մասնակիցները էլ. փոստով ծանուցվեն թեստավորման փուլի անցկացման վայրի և ժամի մասին:

Հանձնաժողովի քարտուղարը առաջարկեց թեստավորման փուլը անցկացնել ք. Երևան, Հալաբյան 41ա հասցեում, 14-րդ հարկում գտնվող ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտի համակարգչային լսարանում:

Ա. Օրբեյանը առաջարկեց քննությունների երկրորդ փուլը անցկացնել սույն թվականի ապրիլի 26-ին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել նոտարների որակավորման ստուգումների մասնակիցների ցանկը, դրանք հրապարակել ՀՀ ԱՆ պաշտոնական կայքէջում և ուղարկել մասնակիցների էլեկտրոնային հասցեներին, ինչպես նաև խմբերի բաժանման սկզբունքը՝ այբբենական կարգով ըստ ազգանունների:

ընդունվեց միաձայն

2. Հաստատել թեկնածուների դիմումների ընդունումը մերժումը հիմնավորող անհատական որոշումները: Որոշումները պետք է ուղարկվեն դիմորդների՝ դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեներով:

ընդունվեց միաձայն

3. Որոշվեց բոլոր մերժված թեկնածուներին տրամադրել ժամկետ մինչև 2014 թ. ապրիլի 17-ի աշխատանքային օրվա ավարտ՝ հավելյալ ապացույցներ ներկայացնելու կամ վերադասության կարգով բողոքարկելու համար: Նշված ապացույցները ներկայացնելու դեպքում դիմումները կհամարվեն ընդունված դիմումը ներկայացնելու օրվանից, և հետևաբար նշված անձանց կթույլատրվի մասնակցել որակավորման ստուգման թեստերի փուլին /այս դեպքում նրանք համապատասխան որոշման հետ մեկտեղ կծանուցվեն քննության անցկացման կոնկրետ ժամի մասին/:

ընդունվեց միաձայն

4. Հաստատել որակավորման ստուգման թեստավորման փուլի անցկացման վայրը՝ ք. Երևան, Հալաբյան 41ա, 14-րդ հարկ, և ժամը ըստ խմբերի՝ առաջին խմբի համար առավոտյան տասին (10.00), երկրորդ խմբի համար՝ ժամը տասներեքն անց երեսուն (13.30):

ընդունվեց միաձայն

5. Որոշվեց հրապարակել թեստերի ամբողջական հարցաշարը առանց ճիշտ կամ սխալ պատասխանների: Որոշվեց քննական հարցաշարերը պատրաստել քննությունների օրը առավոտյան՝ հարցաշարերից պատահական ընտրության սկզբունքով, ինչպես նաև քննությունները անկցանցել թղթային տարբերակով: Որոշվեց, որ թեստի յուրաքանչյուր հարցի համար դիմորդը կստանա մեկ միավոր, եթե իր պատասխանում ընտրի ճիշտ պատասխանը և չընտրի որևէ սխալ պատասխան, հակառակ դեպքում նշված հարցի համար դիմորդը կստանա զրո միավոր:

ընդունվեց միաձայն

6. Որոշվեց դիմումը մերժված դիմորդներին վերադարձնել վճարված պետական տուրքը, ինչի համար նրանք կարող են դիմում ներկայացնել Հանձնաժողովի քարտուղարին (հեռ. 319-117, հասցե.՝ ք. Երևան, Հալաբյան 41ա, 11-րդ հարկ):

ընդունվեց միաձայն

7. Դիմորդները նոտարների որակավորման ստուգմանը պետք է ներկայանան սահմանված օրը և ժամին, միաժամանակ իրենց հետ ունենալով անձը հաստատող համապատասխան փաստաթուղթ (անձնագիր, նույնականացման քարտ, կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթուղթ):

ընդունվեց միաձայն

Արձանագրությունը կազմված է 4 էջից:

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. ՕՐԲԵԼՅԱՆ

Հանձնաժողովի քարտուղար՝

Լ. ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ